

«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

Առարկա՝ ֆիզիա

Դպրոց՝ Ա.Միկոյանի անվան թիվ 166 հիմնական դպրոց

Ուսուցիչ՝ Հովհաննիսյան Երազիկ

Ղեկավար՝ Հակոբյան Մետաքսյա

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
ԳԼՈՒԽ 1. Արժեք հասկացությունը	5
ԳԼՈՒԽ 2. Արժեքային համակարգ	7
ԳԼՈՒԽ 3. Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը Քիմիա առարկայի դասավանդման ընթացքում	9
Եզրակացություն.....	17
Գրականության ցանկ.....	18
Հավելված.....	19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մանկավարժության մեջ «Արժեհամակարգ» հասկացությունը տարբեր ընկալումներ ունի : Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեհամակարգը լիակատար և համեմատաբար ավարտուն է բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում և թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը նշանակում է ոչ մանկավարժական մոտեցում խնդրին : Ահա թե ինչու «Արժեհամակարգ» հասկացությունը չունի խիստ որոշակի սահմանում: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, այդ թվում բնագիտական առարկաները, և այդ թվում Քիմիա առարկան:

Թեմայի արդիականությունը: Հանրակրթության նոր պետական չափորոշիչը սահմանում է որակական այն պահանջները, որ պետք է ունենա սովորողը դպրոցն ավարտելիս: Դրանք հիմնված են սովորողի կարողունակությունների վրա: Հավասարապես շեշտադրվում են սովորողի գիտելիքը, հմտությունը, դիրքորոշումը և արժեքային համակարգը: Արժեքային կրթությունը այսօրվա հրամայականն է, այն մարդուն հնարավորություն է ընձեռում ակտիվ մասնակցել հասարակության վերափոխմանը, իսկ կրթության հենքը արժեհամակարգի ձևավորումն է: Ներկայումս հասարակության մեջ առկա է արժեհամակարգային ճգնաժամ, որոնք բացասաբար են ազդում մարդկության վրա: Արժեքները թույլ են տալիս անձին գնահատել շրջակա աշխարհը, կարևորում են որոշակի գաղափարներ ու նպատակներ: Անձի արժեքները ձևավորվում են մանուկ հասակից՝ դեռևս նախակրթարանում, հետո դպրոցում և ամբողջ կյանքի ընթացքում: Զարգացման հետ զուգընթաց իրենց ազդեցությունն են թողնում ընկերները, ընտանիքը, ուսուցիչները, շրջապատը: Ընդլայնվում է արժեքների յուրացման ու ձևավորման շրջանակը: Այսօրվա աշակերտը վաղվա արժեքների կրողն է, ուստի կարևոր է նրան սնել առողջ արժեքներով, ապագայի համար պատրաստել, հայրենասեր, քաղաքակիրթ, ակտիվ քաղաքացիներ:

Հետազոտական աշխատանքի նպատակը: Հետազոտական աշխատանքի նպատակն է սովորողներին ուղղորդել իմաստավորելու որոշակի արժեքներ, նրանց խրախուսել սեփական կենսափորձի և տարբեր հարցադրումների միջոցով որոշել, թե իրենք ինչպիսի մարդ են ուզում դառնալ, ինչպիսի արժեքներ արժեն և պետք է պահպանել: Կրթական տարբեր աստիճաններում աշակերտի մոտ ձևավորել աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Այս գործընթացն իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի՝ ուսումնական հաստատությունների, հասարակական, պետական, խորհրդակցական մարմինների, մանկապատանեկան կառույցների և տեղեկատվական տեխնոլոգիաների՝ հեռուստատեսության, համացանցային լրատվական միջոցների, մամուլ միջոցով:

Հետազոտական աշխատանքի խնդիրները: Հետազոտական աշխատանքի խնդիրն է ձևավորել այնպիսի անհատի, ով ընդունակ է մուտք գործելու սոցիալական տարբեր համակարգերի համատեղ գոյությամբ բնութագրվող հասարակարգ: Ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածել համոզմունքների և կարողությունների:

Ներկայիս կրթական չափորոշիչների իրականացումը ենթադրում է ուսուցման այնպիսի պայմանների ստեղծում, որոնց առկայությամբ առավելագույնս կարող են բացահայտել յուրաքանչյուր սովորողի ընդունակությունները, նրան իմացական ու կիրառական գործունեության մեջ ներգրավելով: Այսպիսով՝ արդի կրթական համակարգի գործունեության խթանը հանդիսասանում է սովորողը՝ իր իմացական հետաքրքրություններով, դատողական ու ստեղծագործական ընդունակություններով, իր արժեքականությամբ: Իմ ընտրած հետազոտական աշխատանքի նպատակն է՝ վեր հառնել այն դաստիարակչական ու ուսումնական մեթոդներ ու հնարներ, որոնցով սովորողը իրեն արժևորված կզգա:

ԳԼՈՒԽ 1. ԱՐԺԵՔ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Երեխաների կրթության մասին խոսելիս՝ մենք հաճախ օգտագործում ենք «արժեքներ» հասկացությունը: Բոլորս կարևորում ենք արժեքների ձևավորումը գալիք սերնդի մեջ և միզուցե այդ բառին ինչ-որ ենթագիտակցական իմաստ ենք հաղորդում: Փորձենք ձևակերպել, թե ինչ է ի վերջո «արժեք» ասածը: Արժեքն երևույթ է մեր կյանքում, որի դիմաց մենք գին ենք վճարել: Վճարի գինը կարող է տարբեր լինել՝ ապրումներ, հույզեր, այլ արժեքների զոհաբերություն, հարազատների, հայրենակիցների կամ նախնիների կորուստ, կորցրած հող, հայրենիք և այլն: Արժեքը հնարավոր չէ ստանալ հեշտությամբ, այն պետք է վերապրել, անցկացնել քո միջով, զգալ ու գիտակցել: Այդ ամենի դիմաց մենք ստանում ենք իմաստներ, քանի որ արժեքներն են իմաստավորում կյանքը: Առանց արժեքների կյանքը դատարկ է: Հեշտ, առանց կորուստների և հաղթահարումների ապրելն երբեք չի երջանկացնում հենց այն պատճառով, որ չի բերում արժեքների ձևավորման¹:

Կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը: Դպրոցը պետք է լինի օրինակելի միջավայր, ուր հաստատուն են էթիկական նորմեր, ուր աշակերտները սովորում են դրանց համապատասխանել: Հաճախ դպրոցը ստիպված է պայքարել հանրության մեջ տարածված արատների դեմ և այդ պայքարում պարտավոր է հաղթել: Դպրոցում կյանքը չի կարող հեշտ լինել երեխայի համար՝ նա պետք է զգա և՛ ձախողում, և՛ ուրախություն, ունենա թե դժվարություններ, թե հաղթանակներ: Դպրոցում աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը և ընդունի դրանք: Այդ ամենի պտուղը կլինեն իրական արժեքները, այլ ոչ թե թելադրված, անգիր արած, բայց աշակերտի համար ոչինչ չնշանակող ճշմարտությունները: Եթե մենք կարողանանք կառուցել դպրոցներ, որոնք կձևավորեն արժեքներ աճող սերնդի համար, կունենանք աշխարհի ամենալավ և ամենաիմաստալից կրթական համակարգը:

Արժեքների մեծ մասը սնվում է էթիկական նորմերից, ձևավորվում է դրանց շնորհիվ: Էթիկական նորմերը անհրաժեշտ են մարդկանց համակեցությունը ապահովելու համար՝ դրանք պարտադրում են հրաժարվել ցանկալիից հանուն

¹Տե՛ս, <https://mediamax.am/am/column/12925/>

ընդհանուր շահի: Դրանք տարբեր են ոչ միայն տարբեր հասարակություններում, այլ անգամ հասարակության տարբեր շրջանակներում, նույն երկրի տարբեր տարածքներում:

Արժեքը կրթության ոլորտում ակնկալում է՝

- Հաղորդակցություն, հարգանք,
- Պատասխանատվություն,
- քննադատական-վերլուծական մտածողություն,
- համագործակցություն, հոգատարություն, հավասարություն,
- հանդուրժողականություն:

Այս բոլոր չափանիշները բերում են մարդու մեջ արժեհամակարգի ձևավորմանը:

Հանրակրթության պետական չափորոշիչը ելնում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումից և սահմանում է շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները՝ ըստ կրթական աստիճանների և ըստ կրթական աստիճանների ուսումնառության՝ ակնկալվող վերջնարդյունքներ, ուսումնական բնագավառները, դրանց բովանդակությանը ներկայացվող պահանջները, հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, ուսումնական պլանի և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքները, սովորողների գնահատման ձևերը, սանդղակը, հաշվառման կարգը²:

² Տե՛ս, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788>

ԳԼՈՒԽ 2. ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Արդի մանկավարժության կարևոր պահանջներից է երեխաների արժեքային համակարգի ձևավորումը: Կրթության նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է, այլև նրա մեջ բարոյական որոշակի հասկանիչներ ձևավորելը: Արժեքային կրթությունը ի սկզբանե կրթության անքակտելի բաղադրիչն է եղել: Արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը սովորողների մեջ ձևավորում է հայրենասիրություն, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Արժեքային համակարգի ձևավորումը սովորողի մեջ, մանկավարժներիս գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մեր ուշադրության կենտրոնում: Կարևոր է այն, որ մանկավարժական կոլեկտիվը համախմբված լինի իր գործունեության մեջ, ունենա մի միասնական նպատակ՝ սովորողների մեջ արժեհամակարգի ձևավորման գործընթացում:

Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով: Այս առումով իրավացի է Մ. Մոնտենը. «...Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց ետևից»³ :

Մանկավարժական կոլեկտիվը համախմբված ոչ միայն գիտելիք է փոխանցում սովորողին, այլև ապահովում է կարողունակությունների ձևավորումը սովորողների մոտ, պատասխան է տալիս սովորողի արժեքային վերջնարդյունքների համար: Իսկ սովորողի վերջնարդյունքները պետք է լինեն՝

- սովորողը պետք է լինի հայրենասեր, օրինապահ, ազնիվ, մարդասեր, օժտված լինի մեծ պատասխանատվությամբ, լինի նախաձեռնող ու ունենա հաստատուն գործուն դիրքորոշում,

³ Տե՛ս, Մ.Մոնտեն, «Փորձեր», Երևան, 2016, էջ 26:

- դրսևորի փոխըմբռնում և կարողանա համագործակցել՝ ինչպես տարեկիցների, այնպես էլ ծնողների, իրենցից մեծերի և փոքրերի հետ:

ԳԼՈՒԽ 3. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՔԻՄԻԱ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՄԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Քիմիան գիտություն է քիմիական տարրերի, նրանց առաջացրած պարզ և բարդ նյութերի բաղադրության, կառուցվածքի ու հատկությունների, նյութերի քիմիական փոխազդեցությունների և նոր նյութերի առաջացմամբ ուղեկցվող փոխարկումների՝ քիմիական երևույթների օրինաչափությունների մասին: Քիմիան էական նշանակություն ունի մեր կյանքում և համարվում է կարևոր գիտություն, այն միմյանց հետ է կապում կենսաբանություն, ֆիզիկա, բնապահպանություն, մաթեմատիկա գիտությունները: Դասավանդող ուսուցիչը պետք է դասավանդման և ուսումնառության գործընթացը հարմարեցնի սովորողների առանձնահատկություններին, նախասիրություններին և կարողություններին՝ կիրառելով տարբերակված ուսուցման տարաբնույթ ռազմավարություններ: Կարևոր է, որ դասավանդման ընթացքում կիրառված մոտեցումները, աշխատանքների տեսակները և մեթոդները լինեն բազմազան և հետաքրքիր, ուղղակիորեն կապված լինեն ծրագրի նպատակներին և ակնկալվող վերջնարդյունքներին: Այս առարկայի ուսումնասիրությունն աշակերտին հնարավորություն է տալիս հասկանալու քիմիայի հիմնական սկզբունքները, նյութերի կառուցվածքի և հատկությունների ուսումնասիրման գիտական մեթոդները, քիմիական ռեակցիաների ընթացքում տեղի ունեցող ջերմային երևույթները և քիմիական տերմինաբանությունը, ինչը նպաստում է վերլուծական, քննական ու ստեղծագործական մտածողությամբ անհատի ձևավորմանը: Դասավանդման պրոցեսում սովորողի մոտ պետք է դաստիարակվի և զարգացվի ունակություններ և հմտություններ՝ ինքնուրույն եզրահանգումներ անելու, ճանաչելու, ըմբռնելու, արտահայտվելու, ստեղծելու և մեկնաբանելու տարբեր հայեցակարգեր, փաստեր, կարծիքներ՝ օգտագործելով քիմիական գիտելիքներին վերաբերվող մեղիա դաշտը:

Ուսուցման պրոցեսում կարևորը սովորողների մոտ քիմիա առարկայի հանդեպ ձևավորել հետաքրքրություն, անսահման սեր, ինքնուրույն ստեղծագործելու, արարելու հմտություններ, որոնք էլ կձևավորեն սովորողի մեջ արժեքային համակարգ, սովորողը կզգա իր հանդեպ ուսուցչի և իր հասակակիցների հարգանքը,

ինքնուրույն մտածողություն ու եզրահանգումներ անելու ունակությունները և նրա մոտ կձևավորվի ինքնավստահություն սեփական անձի հանդեպ:

Քիմիա առարկայի ուսուցման ընթացում ես մեծ տեղ եմ տալիս սովորողի գրական խոսքին, այն պետք է լինի հայեցի, սովորողի ընդհանուր գրագիտությունը կազմում է սովորելու ու լեզվական հաղորդակցության հիմքը, որի հիման վրա կարող են ձևավորվել գրագիտության քաղաքացիական, բնապահպանական, տնտեսական, ֆինանսական, իրավական, առողջապահական, գիտատեխնիկական և թվային ձևերը: Սովորողների ուսուցման ու դաստիարակության գործընթացում մեծ տեղ եմ տալիս ուսուցման պլանավորմանը՝ հանրակրթության պետական ու առարկայական չափորոշիչներին համապատասխան: Ինչ էլ սովորեցնենք, միշտ պետք է հաշվի առնենք, որ մեր դիմաց նստած է անհատ, ով ունի իր արժանապատվությունը, իրավունքները, պատիվը, չի կարելի ոտնահարել նրա իրավունքներն ու ազատությունը, այլ պետք է ոգևորել, խրախուսել նրան, որպեսզի նա տիրապետի համապատասխան գիտելիքների, կարողությունների, հմտությունների, որոնց հիման վրա էլ ձևավորում են նրա մոտ կարողություններ՝ ստացած գիտելիքներն ու հմտությունները կիրառելու կյանքում:

Ես դասավանդում եմ քիմիա առարկան 7-ից 12-րդ դասարաններում, սիրում եմ իմ մասնագիտությունը և աշխատանքս կատարում եմ մեծ սիրով: Յոթերորդ դասարանում առարկայի խնդիրների, նպատակների և նշանակության մասին սովորողներին ծանոթացնելը սկսում եմ հարցադրումներով՝

1. Ինչո՞ւ սովորել քիմիա,
2. Ի՞նչ սովորել քիմիայից,
3. Ինչպե՞ս սովորեցնել քիմիա:

Սկսվում է մի բանավեճ՝ ուսուցիչ-սովորող, որտեղ բացահայտվում են սովորողների հայեցակարգերը, նրանց մեծամասնությունը կարևորում է քիմիա առարկայի նշանակությունը, արդիականությունը, հատկապես ներկայիս պայմաններում, որ ծագում են տարբեր խնդիրներ՝ թե՛ ռազմարդյունաբերությունում, և թե՛ առողջապահական և տնտեսական բնագավառներում: Ջերմ մթնոլորտում վեր

են հառնվում սովորողների կողմից բազմաթիվ տեսակետներ՝ ինչու սովորեցնել և սովորել: Առարկայի դասավանդման նպատակն է՝ սովորողներին տալ համակարգված գիտելիքներ և օգնել նրանց յուրացնելու ժամանակակից քիմիայի հիմնադրույթները, որն էլ ես իրականացնում եմ դասավանդման ընթացքում՝ հաշվի առնելով սովորողների տարիքային առանձնահատկությունները:

Յոթերորդ դասարանի սովորողներն ունեն իրենց տարիքային հուզականությունը, սիրում են իրենց շատ տեղ տալ ուսուցման պրոցեսում, ոգևորել՝ գովեստի խոսքերով, խրախուսել՝ բարձր գնահատականով, իհարկե, այդ գնահատականը պետք է վաստակեն իրենց քրտնաջան աշխատանքի շնորհիվ: Ուսուցչի կարևորությունը կայանում է նրանում, որ պետք է հաշվի առնի նաև սովորողի տարիքային առանձնահատկությունները, գնահատի աշակերտի կարողունակությունները, ազտություն տա ուսուցման աշակերտակենտրոն եղանակին, նպաստի նրա մեջ արժեհամակարգի ձևավորմանը, որն էլ ես իրականացնում եմ: Օրինակ՝ «Քիմիական տարրերի պարբերական օրենքն ու համակարգը» թեմայի ամփոփումն իրականացրել եմ բաց դասի միջոցով: Նախօրոք զգուշացրել եմ բաց դասի անցկացման օրը, ուղղորդել եմ նրանց՝ ինչ պետք է արվի: Ինձ համար անակնկալ էր, որ բաց դասի ժամանակ սովորողները Մենդելեևի կատարած աշխատանքը ներկայացրեցին իրենց ստեղծագործական մտքի թռիչքով, կանչել էին Մենդելեևի հոգուն, որպեսզի օգնի քարտերը, որոնց վրա գրված էր այդ ժամանակ հայտնի քիմիական տարրերի նշաններն ու անունները, դասավորեն, սա ցույց է տալիս, որ սովորողներն ունեն ստեղծագործական մտքի թռիչք, ճիշտ կողմնորոշվելու, ընկալելու և իրենց հմտությունները կիրառելու ունակություններ, ընդամենը նրանց ուղղորդող մի կայծ է անհրաժեշտ, և այդ կայծից բոց կբռնկվի, ինչը և տալիս է նրանց առարկայի դասավանդող ուսուցիչը: Այս դասը մի վառ ապացույց էր, որ եթե սովորողներին տանք գիտելիքներ ապա նրանք իրենց ստացած գիտելիքներով, օգտագործելով հմտություններ և արտահայտելով իրենց դիրքորոշումները կարող են լուծել որոշակի խնդիրներ, ձևավորել կարողունակություններ՝ տարբեր իրավիճակներում հաջողությամբ և պատասխանատու կերպով կիրառելու համար:

8-րդ դասարանում ուսումնասիրում են «Ջուր, լուծույթներ» թեման: Այս

թեմայի ուսումնասիրությունը կազմակերպում են նախագծային եղանակով: Նախօրոք զգուշացնում են թեման, հանձնարարություն են տալիս աշակերտական 4-5 հոգանոց խմբերին: Սովորողները մեծ հետաքրքրություն են ցուցաբերում, մեղիա դաշտի կիրառմամբ հավաքում են տեղեկություններ՝ ջրի նշանակության վերաբերյալ, ջրի հիշողությունը ներկայացնում են սառույցի կառուցվածքով՝ անկանոն կառուցվածք, եթե ջուրը գտնվել է տհաճ մթնոլորտում և կանոնավոր, եթե այն գտնվել է սիրով լցված միջավայրում: Այնուհետև հարցնում են՝ ինչ ասույթներ գիտեն ջրի վերաբերյալ, ջուրը կյանք է, սկսում է մի սովորող, մյուսը լրացնում է՝ պատահական չէ, որ կյանքը ծագել է ջրում, հաջորդ աշակերտը պատմում է հեքիաթ՝ անմահական ջրի վերաբերյալ, նույն խմբի մյուս աշակերտը խոսում է մեռոնի՝ «սուրբ ջրի» բուժիչ հատկության մասին, որի միջոցով բուժվում են տարբեր հիվանդություններ ունեցող, հատկապես նյարդային, մկանային խնդիրներով անձիք: Մյուս խմբի աշակերտներից մեկը լրացնում է ջրի վերաբերյալ ասույթների շարքը՝ «ջուրը գնում է, ավազը մնում է», - այս ասույթը կապում է գիտելիքի հետ, որ մնայուն գիտելիքը մեծ նշանակություն ունի կյանքի փորձություններին դիմակայելու համար: Առանցքային էր նաև աշակերտների կողմից հիշատակված՝ «լավություն արա, ջուրը քից, մի օր կամուրջ կդառնա, վրայով կանցնես» ասացվածքը, ինչը ևս մեկ անգամ փաստեց, որ մեր աշակերտները ունեն հասարակական կյանքի ներդաշնակ համագործակցությանը նպաստող արժեհամակարգ: Ունենք նաև երաժշտական ունակություններով աշակերտներ, ովքեր մի խումբ են կազմել և երգում են ջրի վերաբերյալ երգեր՝ «ամպի տակից ջուր է գալիս...» երգը:

Հաջորդ սովորողը ներկայացնում է «Վարդավառ» ժողովրդական տոնակատարությունը: Վերջում ամփոփելով մյուս խմբի աշակերտը ներկայացնում է ջրի նշանակությունը, արտասանելով Հովհաննես Թումանյանի «Գետակը», որի վերջին տողը միջառարկայական կապ է հաստատում աշխարհագրություն առարկայի հետ. Դասն անցնում է բարձր մակարդակով, աշակերտները զգում են իրենց կարևորությունը դասապրոցեսի կազմակերպման գործընթացում, իսկ վերջում էլ տալիս են ինքնագնահատականը, ինչպես նաև ինտեգրված դասի կարևորությունը մնայուն գիտելիք ձեռք բերելու և արժեքային համակարգի ձևավորման գործընթացում: Կարևոր է քիմիայի դասապրոցեսում լաբորատոր և գործնական

աշխատանքները, որոնց միջոցով ամրապնդվում են աշակերտների գիտելիքները նշված թեմայի վերաբերյալ:

Օրինակ՝ լուծույթները ներկայացնելիս, աշակերտները խառնում են իրար ջուրն ու սպիրտը, ջուրն ու բուսական յուղը, ջուրն ու շաքարը, ջուրն ու կավիճը և եզրահանգումներ են անում նյութերի լուծելիության վերաբերյալ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ուսումնական նյութի յուրացման ամենաարդյունավետ եղանակը գործնական աշխատանքներն են, որոնց օգնությամբ աշակերտների մոտ ձևավորվում են գործնական հմտություններ: Լավ կլիներ, որ պետական մակարդակով ուշադրություն դարձնեին դպրոցներում քիմիական լաբորատորիաների կահավորմանը և քիմիական նյութերով ապահովմանը:

Արժեհամակարգի ձևավորմանը նպաստում է նաև վիրտուալ լաբորատորիան: Կարևոր են նաև դասապրոցեսում կիրառվող մեթոդներն ու հնարները, որոնք դասավանդման ընթացքը դարձնում են ավելի ակտիվ, աշակերտների մոտ նպաստում են ինքնաճանաչողական, վերլուծական, քննադատական, թվային և մեդիա կարողունակությունների զարգացմանը: Նրանց մոտ ձևավորվում է լեզվական գրագիտություն, կիրթ և գրագետ ներկայացնելու տարբեր հայեցակարգեր, փաստեր և կարծիքներ՝ տվյալ թեմային առնչվող:

Համագործակցային մեթոդի կիրառմամբ ընթացող դասապրոցեսը ավելի արդյունավետ է, զգացել էմ, որ այն ավելի արդյունավետ է ու ուսանելի, քանզի, հատկապես 9-րդ դասարանում, սովորողների մոտ ձևավորվում է սովորել սովորելու կարողունակությունը, որի ընթացքում աշակերտները ձևավորում են իրողությունները քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրելու ինչպես նաև ստեղծագործական և նորանոր մտեցումներ կիրառելու ունակություններ: Նրանք կարողանում են գնահատել սեփական և մյուս աշակերտների կարողունակությունները, հնարավորությունները՝ տվյալ թեման ըմբռնելու ոլորտում: 8-րդ և 9-րդ դասարանների ծրագրային թեմաներից է նաև «Շրջակա միջավայրի պահպանությունը» թեման, որը նպաստում է աշակերտների մոտ բարձր պատասխանատվության, հայրենասիրության ձևավորմանը:

Դասապրոցեսը ճիշտ կազմակերպելու իմ մեթոդներից է նաև ԳՈՒՄ-ը՝ գիտեմ, ուզում եմ իմանալ, ինչ սովորեցի, օրինակ 8-րդ դասարանում աշակերտներն ուսումնասիրում են նյութերի գազային վիճակի օրինաչափությունները, օրենքները, հասկապես՝ Ավոգադրոյի օրենքն ու սրանից բխող հետևությունները: Թեման հայտնելուց հետո, աշակերտներին հանձնարարում եմ 5 րոպե ժամանակահատվածում ներկայացնել՝ ինչ գիտեն նյութերի ագրեգատային վիճակների առանձնահատկությունների վերաբերյալ, անուհետև հաջորդում է մյուսհարցը՝ ի՞նչ են ուզում իմանալ գազային վիճակում գտնվող նյութերի մասին: Աշակերտների օգնությամբ ցուցադրում ենք ջրի երեք ագրեգատային վիճակները, անցումը մեկը մյուսին, ընդ որում սառույցի ջերմաչափումը կատարում ենք սովորական բաժակի և պոլիէթիլենային տոպրակի մեջ, այնուհետև որոշ ժամանակ հետո դիտարկում ենք սառույցի հեղուկի վերածվելը: Աշակերտները եզրահանգում են, որ պոլիէթիլենային տոպրակում գտնվող սառույցն ավելի արագ է հեղուկանում, որովհետև ստեղծվել է «ջերմոցային էֆեկտ»: Թեման ամփոփում ենք տեսրերում լրացնելով՝ ինչ սովորեցին: Այս եղանակն արդյունավետ է նրանով, որ աշակերտների մոտ ձևավորվում է ունակություններ՝ սեփական դիրքորոշումներն արտահայտելու: Արդյունավետ մեթոդ է նաև մտագրոհի մեթոդը, որի միջոցով աշակերտները կաշուն թղթերի վրա գրում են մտքեր և կպնում ենք գրատախտակին, իսկ այնուհետև նյութը մատուցելուց հետո ստուգում ենք թղթերի բովանդակությունը և համեմատում նոր ստացած գիտելիքների հետ: Այս եղանակը նույնպես նպաստում է սովորողների ինքնագնահատականի բարձրացմանը, արժեհամակարգի ձևավորմանը: 9-րդ դասարանի սովորողների մոտ արդեն ձևավորված է կայուն ուշադրություն և վարքագիծ, այս առանձնահատկությունները հնարավորություն են տալիս առավել մեծ մասնացություն և ակտիվություն դրսևորելու ամեն մի դասապրոցեսի ընթացքում, ինչը իմ աշխատանքում ավելի մեծ արդյունավետություն է ապահովում: Սովորողները յուրաքանչյուր հասկացության համար կազմում են Վենի դիագրամ, համեմատում և վեր են լուծում այդ հասկացությունները, գաղափարները այլ հասկացությունների և գաղափարների հետ: Օրինակ՝ էլեկտրոլիտային դիսուցում թեման ուսումնասիրելիս նրանք կազմում են Վենի դիագրամ՝ առաջին կարգի էլեկտրահաղորդիչների միջև, անում են իրենց եզրահանգումները, ստանում են

զավանական էլեմենտ և բացատրում են նյութերի դիսցման էությունը ջրային լուծույթում և հալույթում: Կատարում են նաև լաբորատոր փորձ, որը զարգացնում և ամրապնդում է նրանց իմացական, ճանաչողական, թվային մեդիայի, ԲՏՃՄ-ի հմտություններն ու ունակությունները, ձևավորում կարողունակություններ այն կյանքում կիրառելու, ինչպես նաև նրանց մեջ ձևավորվում է արժեհամակարգ՝ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ակտիվ քաղաքացու ծնունդ և զարգացում:

Դպրոցական դասագրքերում, դասերի ժամանակ հաճախ ականատես ենք լինում իրավիճակների, երբ կարճ ժամանակում աշակերտներին փոխանցվում են մի քանի տասնյակ նոր անուններ, տերմիններ ու հասկացություններ, որ աշակերտները հնարավորինս շատ բան սովորեն: Մասնագետները խորհուրդ են տալիս նոր նյութը սովորեցնել կապակցված: Խորհուրդ է տրվում օգտագործել գծապատկերներ, պատմություններ, որպեսզի աշակերտները կարողանան լավ յուրացնել նյութը: Կարևոր է նաև նյութի կապակցված ուսուցումը: Եթե ուսուցանում եք անջատ փաստեր, ապա աշակերտները քիչ բան կարող են սովորել⁴:

Քիմիայի դասավանդման ընթացքում օգտագործում եմ նաև M –աձև և T-աձև աղյուսակների, դասմրցույթ, դաս-բանավեճ, ստեղծագործական դաս, միջառարկայական ինտեգրված դաս մեթոդներն ու հնարները, որոնք մեծ ակտիվություն են ստեղծում սովորողների մոտ և ավելի արդյունավետ են դարձնում դասապրոցեսը, որի ընթացքում էլ ձևավորվում է սովորողների մեջ արժեհամակարգ, սովորողը էլ ավելի վստահ է դառնում իր գիտելիքների հանդեպ, իր գործունեության մեջ:

⁴ Տե՛ս, Սերոբ Խաչատրյան ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան 2020, էջ 10:

Եզրակացություն

Ժամանակակից հասարակությունն արմատական փոփոխությունների մի բարդ շրջան է անցնում: Դա անմիջականորեն ազդում է երիտասարդ սերնդի մտածելակերպի, գործելակերպի, հոգեբանության և արժեքային կողմնորոշումների վրա: Նա այդ գործընթացների մասնակիցն է, այդ արժեքների ժառանգորդն ու կրողը: Նրա առջև ծառանում է նոր ժամանակի պահանջներին համապատասխան վերափոխվելու, կարողությունները զարգացնելու և իրացնելու խնդիրը: Ներկայումս կրթությունը վերաճել է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային անհրաժեշտ որակներ: Կրթական միջավայրի և կրթության բովանդակության արդիականացման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների և մեթոդների վերանայում, կրթության նկատմամբ պետական և հասարակական հոգածության արմատական բարելավում: Արժեքային համակարգի ձևավորումը կարևորվում է նաև այն պատճառով, որ որոշակի արժեքային համակարգի հենքի վրա կառուցված գործողությունները ճանաչելի են և հետևաբար ընդունելի, քանզի դրանք սկիզբ են առնում ազգային, համամարդկային համընդհանուր սկզբունքներից, նորներից և օրենքներից: Այս տեսանկյունից դիտարկելիս կարևոր է անհատ քաղաքացու արժեհամակարգի ձևավորումը: Կրթությունը մարդակենտրոն գործընթաց է, ազգի հիմքը կրթությունն է և ցանկացած լավ, բարի ու արժեքավոր բան, հենց կրթության միջոցով է, որ փոխանցվում է մարդկանց, տարածվում հասարակության մեջ, դաստիարակում մատաղ սերնդին: Կրթության ողնաշարը, կրթության առանցքը արժեհամակարգն է: Կարծում եմ, որ ցանկացած մարդու համար արժեքային համակարգն այն է, ինչ այդ մարդն ինքն իր համար արժեք է համարում: Մանկավարժը պետք է սեփական օրինակով դաստիարակի սանին, օրինակ ծառայի, որովհետև օրինակի ուժը զորավոր է: Հասարակության և յուրաքանչյուր անհատի բարեկեցիկ կենսակերպի ձևավորման և ապահովման համար Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում արժեքային որոշակի համակարգի առկայությունը կրթության բովանդակության անհրաժեշտ բաղադրիչներից մեկը դարձավ, որը սովորողներին պետք է փոխանցել գիտելիքներ,

կարողություն-հմտություններ, որոնք ուղղված լինեն ընդհանրական համակարգված արժեքային հիմքերի ձևավորմանը և դրանով՝ պետության, ազգի և անհատի ներդաշնակ փոխհարաբերության ապահովմանը: Քսաներորդ դարավերջի և քսանմեկերորդ դարասկզբի քաղաքացին հասկանում էր, որ այն երկիրն է հավակնում ունենալ լավ կրթական համակարգ, որը ոչ միայն գիտելիքի փոխանցումը, կարողություն-հմտության ձևավորումն է ապահովում, այլև իսկապես պատասխան է տալիս սովորողի արժեքային վերջնարդյունքների մասին բոլոր հիմնահարցերին: Այսպիսով՝ ինչ մեթոդներ և հնարներ էլ օգտագործենք դասապրոցեսի ընթացքում, պետք է կարևորենք հանրակրթական պետական չափորոշիչները, որոնց վերջնարդյունքներն են հայրենասիրություն, ընկերասիրություն, արժանապատվություն, պատասխանատվություն, ինքնավստահություն, համագործակցություն, որպեսզի ԵՍ-ը դառնա ՄԵՆՔ: Սովորողը ունի անցնելու կարողունակություններով և անսահման ձգտումներով լի այն երկար ճանապարհը, որը իրագործվում է ժողովրդավարության, համերաշխության և բոլորի բարեկեցության վրա հիմնված հասարակության մեջ:

Ուսուցման նպատակն է սովորողների մոտ ձևավորել բարձր գիտելիքների բազա, արժեհամակարգ, առանց որոնց հնարավոր չէ գիտության, տեխնիկայի, արդյունաբերության հետագա զարգացումը:

Օգտագործված գրականության ցանկ

Գրականություն`

1. Քիմիա ՀՊՉ ծրագրեր
2. Սերոբ Խաչատրյան ուսուցման արդյունավետ հնարներ, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Երևան 2020, էջ 76:
3. Վ. Սոնտեն, «Փորձեր», Երևան, 2016 , էջ 26:
4. Վ. Սուխումլինսկի, Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան 1977, էջ 551:

Ինտերնետային կայքեր`

1. <https://mediamax.am/am/column/12925/26.08.2023/>
2. <https://lib.armedu.am/article/946/25.08.2023/>
3. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788/23.08.2023/>
4. <https://www.google.com/search?/24/08/2023/>

Հավելված



Ավարայրի ճակատամարտը (ազգային արժեքների պահպանման վառ օրինակ)